

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է հանրապետական գորակոչային հանձնաժողովի ընդլայնված խորհրդակցությանը

19.05.2014



Մայիսի 16-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում տեղի է ունեցել հանրապետական գորակոչային հանձնաժողովի ընդլայնված խորհրդակցություն, որի ընթացքում ամփոփվել են 2013թ. ձմեռային գորակոչի արդյունքները, քննարկվել ու առաջադրվել են 2014թ. ամառային գորակոչի պատշաճ կազմակերպման և անցկացման հետ կապված խնդիրներ:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ ՊՆ, ԶՈւ և ԶՈւ ԳՇ ղեկավար կազմը, հանրապետական գորակոչային հանձնաժողովի անդամները, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, մարզպետներ, հանրապետության տարածքային զինկոմներն ու զինկոմիսարիատների աշխատակիցներ, բուժհանձնաժողովների անդամներ, գորակոչի անցկացմանն օժանդակող այլ կառույցների ներկայացուցիչներ:

Ողջունելով խորհրդակցության մասնակիցներին՝ ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանը կարևորել է միջոցառման անհրաժեշտությունը, նշելով, որ զինված ուժերի կարևորագույն գործընթացներից մեկը նրա համալրումն է: Վերջին տարիներին գորակոչին մասնակցող բոլոր կառույցների համատեղ աշխատանքների շնորհիվ առավել բարձր հիմքերի վրա է դրվել գործընթացի իրականացումը, մշակվել և իրագործվել են մի շարք բարեփոխումներ:

Հաշվետու զեկույցով հանդես է եկել ՀՀ ԶՈւ ԳՇ պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը: Խոսելով 2013թ. ձմեռային գորակոչի արդյունքների և 2014թ. ամառային գորակոչի խնդիրների մասին, Յուրի Խաչատուրովն ընդգծել է գորակոչի թե դրական դրսևորումները և թե որոշակի բացթողումները: Փաստելով, որ նախորդ գորակոչին առաջադրված խնդիրներն ընդհանուր առմամբ կատարվել են, Յուրի Խաչատուրովն անդրադարձել է գորակոչվածների թվաքանակի, ծառայությանը ոչ պիտանի ճանաչվածների, ոչ շարային և շարային ծառայության գորակոչվածների վիճակագրական տվյալներին, զինկոմիսարիատների ու բուժհանձնաժողովների կողմից կատարված աշխատանքներին:

ԶՈւ գլխավոր շտաբի պետը մատնանշել է զորակոչի ընթացքում առավել արդյունավետ աշխատած և աչքի ընկած, ինչպես նաև որոշ հարցերում թերացած զինկոմիսարիատները:

Խորհրդակցության ընթացքում հնչած այլ ելույթներում արծարծվել և քննարկվել են երիտասարդների կցագրմանը և հաշվառմանը, բուժհետազոտությանը, զորակոչից խուսափողների նկատմամբ պատժամիջոցների ու վարչական տույժերի կիրառմանը, ինչպես նաև զորակոչին առնչվող այլ հարցեր:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքներն ու շնորհակալություն հայտնելով կատարված համատեղ լայնածավալ ու արդյունավետ աշխատանքի համար՝ պաշտպանական գերատեսչության ղեկավարը հույս է հայտնել, որ բոլոր օղակների սերտ համագործակցության արդյունքում հերթական զորակոչի աշխատանքները ևս կիրականացվեն բարձր մակարդակով: Մեյրան Օհանյանը 2014թ. ամառային զորակոչի պատշաճ կազմակերպման և անցկացման առումով տվել է նաև մի շարք ցուցումներ և հանձնարարականներ:

Զմեռային զորակոչն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու, այդ գործընթացին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար զինկոմիսարիատների, իրավապահ մարմինների, բուժհանձնաժողովների և այլ կառույցների մի խումբ ներկայացուցիչներ ու զինձառայողներ պարզևատրվել են գերատեսչական մեղալներով, պատվոգրերով և արժեքավոր նվերներով:

Խորհրդակցությանը մասնակցել են նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը և մարզային զորակոչային հանձնաժողովի անդամները:

Աղբյուրը՝ mil.am, 16.04. 2014